Արձանագրություն N 11

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԵՄԾՁԲ-23/3» ծածկագրով երկու փուլով մրցույթի գնահատող հանձնաժողովի՝ երկրորդ փուլի հրավերի վերաբերյալ պարզաբանում ներկայացնելու մասին նիստի

ք. Երևան «9» հունվարի 2024թ.
Ժամը՝ 15:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Է. Հակոբյան – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ,

Հանձնաժողովի անդամներ

Գ. Մանթաշյան - ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ,
Ս. Հովհաննիսյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի օգնական,
Ա. Արամյան - ՀՀ ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության պետ,
Թ. Ղալայան - ՀՀ ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության համակարգման բաժնի պետ,
Ա. Ղազարյան - ՀՀ ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության առանձին գործառույթներ համակարգող խորհրդական,
Ս. Մինասյան - ՀՀ ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության համակարգման բաժնի գլխավոր մասնագետ,

Գնումները համակարգող

Ա. Աղաբաբյան - ՖՆ կառավարչական հարցերի կազմակերպման վարչության գնումների բաժնի պետ,

Բացակայում էր՝

Հանձնաժողովի անդամ

Ա. Ավանեսյան – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ:

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հաստատել և ներկայացնել հրավերի վերաբերյալ պարզաբանումը
2. Հաստատել հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը

Ընդունվել է որոշում. կողմ՝ 7, դեմ՝ 0:

2. Երկրորդ փուլի հրավերի վերաբերյալ տրվող պարզաբանման մասին

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված՝ <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 14-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով գնահատող հանձնաժողովն իր իրավասության շրջանակներում

Որոշեց.

1. հաստատել և տրամադրել «ՀՀ ՖՆ-ԵՄԾՁԲ-23/3» ծածկագրով ընթացակարգի երկրորդ փուլի հրավերի վերաբերյալ 2024 թվականի հունվարի 8-ին ստացված հարցման վերաբերյալ պարզաբանումը /կցվում է/:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 7, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի ու վայրի մասին

«ՀՀ ՖՆ-ԵՄԾՁԲ-23/3» ծածկագրով ընթացակարգի երկրորդ փուլի հայտերի բացման նպատակով հանձնաժողովի նիստը տեղի կունենա սույն թվականի հունվարի 24-ին ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 7, դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի ղեկավար՝ _____ Է. Հակոբյան

Գնահատող հանձնաժողովի անդամներ՝ _____ Գ. Մանթաշյան

_____ Ս. Հովհաննիսյան

_____ Ա. Արամյան

_____ Թ. Ղալայան

_____ Ա. Ղազարյան

_____ Ս. Մինասյան

Գնումները համակարգող՝ _____ Ա. Աղաբաբյան

ՀՀ ՖՆ-ԵՄԾՁԲ-23/3 ծածկագրով երկու փուլով մրցույթի երկրորդ փուլի հրավերի վերաբերյալ ստացված հարցման ու պարզաբանման

վերաբերյալ հայտարարություն

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ ՖՆ-ԵՄԾՁԲ-23/3 ծածկագրով երկու փուլով մրցույթի երկրորդ փուլի հրավերի վերաբերյալ ստացել է հարցում: Հարցումը և ներկայացված պարզաբանումը ներկայացվում են ստորև.

Հիմք ընդունելով ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԵՄԾՁԲ-23/3» ծածկագրով երկու փուլով մրցույթ ընթացակարգի երկրորդ փուլի հրավերի «III. Պարզաբանում ստանալու և հրավերի մեջ փոփոխություն կատարելու կարգը» բաժնի 3.1 կետը՝ խնդրում ենք տրամադրել պարզաբանում ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԵՄԾՁԲ-23/3» ծածկագրով երկու փուլով մրցույթ ընթացակարգի երկրորդ փուլի հրավերի ստորև ներկայացվող կետերի մասով.

1. Համաձայն հրավերի 2.7 կետի՝ «Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող աշխատանքային ռեսուրսներ», իսկ համաձայն հրավերի 2.8 կետի՝ «Մասնակցին ներկայացվող՝ 1) «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը՝ ա. պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ որակավորումը ունեցող աշխատանքային ռեսուրսները՝ Ծրագրի ղեկավար (Project Manager), Տեխնիկական թիմի ղեկավար և Կրեատիվ ղեկավար: Ծրագրի ղեկավարի և տեխնիկական թիմի ղեկավարի մասով պետք է ներկայացվեն առանձին թեկնածություններ, իսկ կրեատիվ ղեկավարի առանձին թեկնածություն ներկայացնելը կարող է դիտվել որպես առավելություն: բ. մասնակիցը հայտով ներկայացնում է սույն կետի ա. պարբերությամբ սահմանված աշխատանքային ռեսուրսների որակավորմանը ներկայացվող պահանջների բավարարումը հիմնավորող համապատասխան փաստաթղթեր»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում ենք պարզաբանել, թե ինչ ձևաչափով պետք է ներկայացվեն Ծրագրի ղեկավարի, տեխնիկական թիմի ղեկավարի և կրեատիվ ղեկավարի մասով առանձին թեկնածությունները: Միգուցե, մրցութային գործընթացներում առհասարակ հանդիպող հետևյալ տեսքով/ձևաչափով՝

Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների				
անունը, զգանունը	Որակավորումը	աշխատանքային փորձը		գործատուի անվանումը, երկիրը, էլեկտրոնային փոստի հասցեն և հեռախոսահամարը
		ժամանակահատվածը	գործունեությունը և կատարած աշխատանքը	
1	2	3	4	5

Խնդրում ենք պարզաբանել նաև, թե որոնք են հանդիսանում մասնակցի կողմից հայտով ներկայացման ենթակա աշխատանքային ռեսուրսների որակավորմանը ներկայացվող պահանջների բավարարումը հիմնավորող համապատասխան փաստաթղթերը: Արդյո՞ք միայն ինքնակենսագրությունը բավարար է, թե անհրաժեշտ են նաև այլ փաստաթղթեր:

Հրավերով ծրագրի ղեկավարի, տեխնիկական թիմի ղեկավարի և կրեատիվ ղեկավարի մասով առանձին թեկնածությունները ներկայացնելու համար հստակ ձևաչափ սահմանված չէ: Ինքնակենսագրությունները բավարար կլինեն, բայց դրանք պետք է ներառեն գործատուների տվյալները (անվանում, երկիր, հեռախոս, էլ. փոստ):

2. Համաձայն հրավերի 4.5 կետի՝ «Երկրորդ փուլի հայտը ներառում է մասնակցի կողմից հաստատված՝ 5) որակավորման չափանիշներին մասնակցի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը՝ մեկ բնօրինակ և թվով երեք պատճեն»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում ենք պարզաբանել, թե որոնք են հանդիսանում որակավորման չափանիշներին մասնակցի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, և ինչ ձևաչափով դրանք պետք է ներկայացվեն: Արդյո՞ք այս կետի տակ ենթադրվում է, որ մասնակիցը հայտով պետք է ներկայացնի արդեն իսկ նախորդ կետում հիշատակված աշխատանքային ռեսուրսների որակավորմանը ներկայացվող պահանջների բավարարումը հիմնավորող համապատասխան փաստաթղթերը:

Հրավերով ծրագրի ղեկավարի, տեխնիկական թիմի ղեկավարի և կրեատիվ ղեկավարի մասով առանձին թեկնածությունները ներկայացնելու համար հստակ ձևաչափ սահմանված չէ: Ինքնակենսագրությունները բավարար կլինեն, բայց դրանք պետք է ներառեն գործատուների տվյալները (անվանում, երկիր, հեռախոս, էլ. փոստ):

3. Համաձայն հրավերի 4.5 կետի՝ « Երկրորդ փուլի հայտը ներառում է մասնակցի կողմից հաստատված՝ 8) տեխնիկական առաջարկ՝ մեկ բնօրինակ և թվով երեք պատճեն», իսկ համաձայն հրավերի 9.14 կետի՝ «Տեխնիկական առաջարկն իր մեջ ներառում է Աշխատանքային ռեսուրսները, Միջոցառման հայեցակարգը և Միջոցառման իրականացման ծրագիրը»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում ենք պարզաբանել, թե ինչ ձևաչափով պետք է ներկայացվի տեխնիկական առաջարկը և ինչ պետք է ներառվի դրանում: Արդյո՞ք պետք է այս կետով ներկայացվի միայն Միջոցառման հայեցակարգը/Շնորհանդեսը և Միջոցառման իրականացման ծրագիրը, թե նաև Աշխատանքային ռեսուրսները՝ չնայած որ հայտով դրանց ներկայացման պահանջը նշված է առանձին կետով, որին անդրադարձանք վերևում:

Տեխնիկական առաջարկը ներկայացնելիս մասնակիցները պետք է առաջնորդվեն հրավերի կառուցվածքով՝ հիմք ընդունելով հրավերի 4.5 կետը, այլ ոչ թե հայտի գնահատման չափանիշները:

4. Համաձայն հրավերի 4.5 կետի՝ «Երկրորդ փուլի հայտը ներառում է մասնակցի կողմից հաստատված՝ 9) Տեխնիկական առաջարկին կից հայտով պետք է ներկայացվի նաև շնորհանդես, որը հանդիսանալու է կնքվելիք պայմանագրի անբաժանելի մաս, իսկ շնորհանդեսում ներառված աշխատանքները, ապրանքները և ծառայությունները հանդիսանալու են պայմանագրի շրջանակում կատարման ենթակա բաղադրիչներ»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում ենք պարզաբանել, թե Տեխնիկական առաջարկին կից հայտով **ինչ ձևաչափով** պետք է ներկայացվի Շնորհանդեսը՝ թղթային և/կամ էլեկտրոնային եղանակով: Եթե էլեկտրոնային, ապա արդյո՞ք այն պետք է ներկայացվի տեխնիկական առաջարկին կից՝ ծրարում զետեղված կոշտ կրիչով (ֆլեշով, CD, DVD), թե այլ եղանակով:

Շնորհանդեսը պարտադիր կերպով պետք է ներկայացվի թղթային ձևով, հնարավորության դեպքում ցանկալի կլինի նաև էլեկտրոնային կրիչով շնորհանդեսի առկայությունը:

5. Խնդրում ենք պարզաբանել, թե հայտը ներկայացնելիս ի՞նչ պետք է նշվի հրավերի «Գնային առաջարկ» Հավելված 2-ի աղյուսակի 2-րդ՝ «Ծառայության անվանումը» բաժնում:

Հրավերի հավելված 2-ի աղյուսակի «Ծառայության անվանումը» բաժնում պետք է նշվի ծառայության չափաբաժնի անվանումը՝ «2024 թվականի մայիսի 14-16-ը Երևանում անցկացվելիք Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կառավարիչների խորհրդի 2024 թվականի տարեկան հանդիպման կազմակերպման ծառայություններ»:

6. Խնդրում ենք պարզաբանել, արդյո՞ք հրավերի «Գնային առաջարկի բացվածք» Հավելված 2.1-ի աղյուսակում զետեղված ծառայությունների տողերը սպառիչ են և անփոփոխ, թե Գնային առաջարկի բացվածքը կարող է փոփոխվել և համաձայնեցվել մասնակցի կողմից ներկայացված Միջոցառման կոնցեպտին /շնորհանդեսին/ և Միջոցառման իրականացման ծրագրին համապատասխան:

Հրավերի հավելված 2.1-ում նշված ծառայությունների տողերը սպառիչ են և անփոփոխ:

Մասնակիցները կարող են հավելյալ տեղեկատվություն ներկայացնել շնորհանդեսով, որը հանդիսանալու է կնքվելիք պայմանագրի անբաժանելի մաս::

7. Համաձայն հրավերի Հավելված 6-ի 2.3 կետի՝ «Ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվելու են փուլային եղանակով՝ հաշվետվությունների, հանձնման-ընդունման արձանագրությունների և ակտերի հիման վրա՝ կնքվելիք պայմանագրի համապատասխան աղյուսակում նկարագրված 3 փուլերով»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում ենք պարզաբանել, թե ինչպես են Պատվիրատուի կողմից գնահատվելու կնքվելիք պայմանագրի համապատասխան աղյուսակում նկարագրված ծառայությունների մատուցման երեք փուլերից յուրաքանչյուրի շրջանակներում Կազմակերպչի կողմից մատուցվելիք ծառայությունները, և ինչպես է որոշվելու տվյալ փուլի ավարտը, եթե տվյալ կոնկրետ փուլի ավարտն արձանագրելու համար սահմանված չեն հստակ չափելիության (քանակական) ցուցիչներ և վերջնաժամկետներ /օրինակ՝ առնվազն 1-ին փուլի մասով նշված չէ կնքված պայմանագրերի նվազագույն քանակը և այլն/:

Հրավերի հավելված 6-ով սահմանված է, որ տարեկան հանդիպման մեկնարկից առնվազն երկու ամիս առաջ Կազմակերպիչը պետք է մեկնարկի առաջմղման արշավ՝ Հյուրընկալող երկրի հետ համաձայնեցված բովանդակությամբ և ձևաչափով:

Աշխատանքների փուլերի կառավարումն իրականացվելու է Կատարողի կողմից, որոնց հիման վրա կկատարվեն համապատասխան վճարումները: 1-ին փուլով, մասնավորապես, ի թիվս այլնի, նախատեսվում է՝ 2024 թվականի մայիսի 14-16-ը Երևանում անցկացվելիք Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կառավարիչների խորհրդի 2024 թվականի տարեկան հանդիպման կազմակերպման ծառայությունների պատշաճ մատուցման համար անհրաժեշտ պայմանագրերի (այդ թվում՝ նախնական) կնքում:

8. Համաձայն հրավերի Տեխնիկական բնութագրի 1-ին՝ «ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՎԱՅՐԵՐԸ» բաժնի 3-րդ կետի, և Տեխնիկական բնութագրի 9-րդ՝ «ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԵՐԻՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ» բաժնի 9.1 կետի՝ «որպես Կառավարիչների խորհրդի նիստի բացման արարողության վայր է նշված՝ Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի «Արամ Խաչատրյան» համերգասրահը, և Կառավարիչների խորհրդի նիստի բացման արարողությունը հրավիրվելու է Տարեկան հանդիպման շուրջ 1000 մասնակից»: Մինչդեռ, համաձայն հրավերի Տեխնիկական բնութագրի 9-րդ՝ «ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԵՐԻՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ» բաժնի 9.1 կետի՝ «Միջոցառման անցկացման համար անհրաժեշտ գույքին և տեխնիկային, ինչպես նաև անձնակազմին ներկայացվող պահանջներն աղյուսակի Տարածքի կահավորում տողի առաջին ենթատողում նշված է՝ *«Առկա բեմ՝ ընդլայնված/նվագախմբի բարձրացված փոսով (16 մ x 12 մ)»*, իսկ համաձայն նույն բաժնի 9.10 կետի համաձայն՝ «Տարեկան հանդիպման բոլոր մասնակիցների ընդունելությունը նախատեսված է Տարեկան հանդիպմանը գրանցված անձանց համար, հետևաբար ակնկալվում է մինչև 2,000 անձի մասնակցություն»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում ենք պարզաբանել, թե կոնկրետ որ դահլիճում է տեղի ունենալու Կառավարիչների խորհրդի նիստի բացման արարողությունը՝ Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի դահլիճում, որն ունի նվագախմբի համար նախատեսված փոս և տեղավորում է 1070 հանդիսական, թե հայֆիլհարմոնիայի «Արամ Խաչատրյան» համերգասրահում, որը չունի փոս և տեղավորում է 1300 հանդիսական: Միաժամանակ, խնդրում ենք պարզաբանել, արդյո՞ք ճիշտ է մեր այն ենթադրությունը, որ Կառավարիչների խորհրդի նիստի բացման արարողությունը հրավիրվելու է Տարեկան հանդիպման շուրջ 1000 մասնակից, իսկ բացման արարողությունից հետո կայանալիք՝ Տարեկան հանդիպման բոլոր մասնակիցների ընդունելությանը՝ մինչև 2000 անձ:

Կառավարիչների խորհրդի նիստի բացման արարողությունը տեղի է ունենալու Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի դահլիճում:

Այո՛, ինչպես նշել եք, կառավարիչների խորհրդի նիստի բացման արարողությանը հրավիրվելու է Տարեկան հանդիպման շուրջ 1000 մասնակից, իսկ բացման արարողությունից հետո կայանալիք՝ Տարեկան հանդիպման բոլոր մասնակիցների ընդունելությանը՝ մինչև 2000 անձ:

9. Համաձայն հրավերի Տեխնիկական բնութագրի 3-րդ՝ «ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿԵՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՈԳԻՍՏԻԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ» բաժնի 6-րդ կետի՝ «Օդանավակայանում պետք է տեղադրվեն Տարեկան հանդիպման թեմատիկ պաստառներ (բաններներ), առկա էկրաններին պետք է ցուցադրվեն թեմատիկ անիմացիաներ կամ հոլովակներ», և Տեխնիկական բնութագրի 1-ին՝ «ԲՐԵՆԴԱՎՈՐՈՒՄ, ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆԻՄԱՑԻԱՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ, ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ, ԱՌԱՋՄՂՈՒՄ ԵՎ ՆՎԵՐՆԵՐ» բաժնի՝ «Տարեկան հանդիպման թեմատիկ անիմացիոն հոլովակներ և պաստառներ (բաններներ) պետք է տեղադրվեն «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի ժամանման և մեկնման սրահներում»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում ենք պարզաբանել, թե կոնկրետ քանի պաստառներ (բաններներ) պետք է տեղադրվեն օդանավակայանի վերը նշված գոտիներում, և թե կոնկրետ քանի թեմատիկ անիմացիաներ կամ հոլովակներ պետք է ցուցադրվեն՝ միաժամանակ հստակեցնելով

պատրաստվելիք/ցուցադրվելիք թեմատիկ անմիացիոն հոլովակների տևողությունը (օրինակ՝ 1-3 կամ 3-5 րոպե), ինչպես նաև դրանց պատրաստման և բովանդակության մասով ակնկալիքները Կազմակերպչից:

Պաստառների (բաներների), թեմատիկ անիմացիաների, հոլովակների քանակները, տևողությունները մասնակիցներն իրենք պետք է առաջարկեն:

10. Համաձայն հրավերի Տեխնիկական բնութագրի 4-րդ՝ «Անվտանգություն» ենթաբաժնի՝ «Միջոցառումների անցկացման վայրերի մուտքի մոտ իրականացվելու է Տարեկան հանդիպման մասնակիցների նույնականացում՝ վերջիններիս QR կոդ պարունակող անվանաքարտերի (բեյջ) և QR կոդերը ընթերցող հատուկ սարքավորումների միջոցով, որոնք մատակարարվելու են Բանկի կողմից»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում ենք պարզաբանել, թե ո՞վ, ինչպե՞ս և ե՞րբ է կազմակերպելու և համակարգելու նույնականացման գործընթացը, ինչպես նաև ո՞վ է տպագրելու QR կոդ պարունակող անվանաքարտերը (բեյջ), ինչ ձևաչափով և ինչպիսի բնութագրիչներ ունեցող սարքով: Եթե Տեխնիկական բնութագրով ենթադրվում է, որ QR կոդ պարունակող անվանաքարտերը (բեյջ) տպագրվելու են Կազմակերպչի կողմից, ապա խնդրում ենք նշել անհրաժեշտ անվանաքարտերի (բեյջ) քանակը, դրանց ձևաչափը և այլ անհրաժեշտ տվյալներ:

Անվանաքարտերի (բեյջեր) պատրաստում նախատեսվում է Տարեկան հանդիպման բոլոր մասնակիցների և սպասարկող անձնակազմի համար: Անվանաքարտերի պատրաստման համար Բանկը տրամադրելու է համապատասխան սարքավորումներ, որոնք շահագործվելու են Կազմակերպչի կողմից՝ ըստ անհրաժեշտության համագործակցելով Բանկի համապատասխան թիմի/ներկայացուցիչների հետ:

Անվանաքարտերը պետք է լինեն երկկողմանի գունավոր տպագրության, պարան-ամրակով, տարեկան հանդիպման տարբերանշանով, մասնակցի/սպասարկող անձի նկարով: Ընդ որում՝ մասնակիցների յուրաքանչյուր խմբի համար պատրաստվելու է գունային տարբերակված անվանաքարտ:

Անվանաքարտերում ներառման ենթակա տեղեկատվությունը տրամադրվելու է Բանկի կողմից: Անվանաքարտի որակական բնութագրին (չափս, հումք) ու դիզայնին, այդ թվում՝ ներառվող տեղեկատվությանը, ինչպես նաև պատրաստման ժամկետներին ներկայացվող պահանջները ենթակա են համաձայնեցման Բանկի հետ:

11. Համաձայն հրավերի Տեխնիկական բնութագրի 7-րդ՝ «Հյուրասիրություն» ենթաբաժնում սահմանված աղյուսակի՝ «Անվճար հյուրասիրությունն ըստ սրահների ընդգրկում է Լանչ-բոքսեր /2024թ. մայիսի 12-16/՝ Բանկի կողմից վարձված լոկալ անձնակազմի (100 անձ) համար»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում ենք պարզաբանել, արդյո՞ք Բանկի կողմից վարձված լոկալ անձնակազմի (100 անձ) մեջ ներառված է Կազմակերպչի անձնակազմը, թե Կազմակերպչի անձնակազմի սննդով ապահովման հարցը պետք է ապահովվի առանձին՝ Կազմակերպչի կողմից:

Բանկի կողմից վարձված լոկալ անձնակազմի (100 անձ) մեջ ներառված չէ Կազմակերպչի անձնակազմը:

Հեռախոս՝ (+374) 11 800-114

Էլ. Փոստ՝ ani.aghababyan@minfin.am

Պատվիրատու՝ ՀՀ ֆինանսների նախարարություն